ԱՐԴ/0085/01/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 սեպտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 21-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2019 թվականի հուլիսի 2-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել թիվ 58215319 (ԱՐԴ/0085/01/19) քրեական

գործն ըստ մեղադրանքի՝ Այլազ Մաջիթի Ամոյանի և Գևորգ Ռոբերտի Եղիազարյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 35-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 334-րդ հոդվածի 1-ին մասով:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Հովհաննիսյան) 2019 թվականի հուլիսի 3-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2019 թվականի հուլիսի 18-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

1.1. 2020 թվականի հոկտեմբերի 28-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Վ.Ջիվանյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 30-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

1.2. 2022 թվականի մարտի 9-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Ղուկասյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մարտի 10-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մարտի 24-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործի քննությունը վերսկսելու և դատական քննության նշանակելու մասին:

1.3. 2023 թվականի փետրվարի 3-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Ադամյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի փետրվարի 8-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի փետրվարի 22-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործի քննությունը վերսկսելու և դատական քննության նշանակելու մասին:

1.4. 2024 թվականի փետրվարի 12-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Է.Մանասյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 13-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 26-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործի քննությունը վերսկսելու և դատական քննության նշանակելու մասին:

1.5. 2025 թվականի ապրիլի 8-ին քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Բաբախանյանին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մարտի 27-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի օգոստոսի 7-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ա.Ասատրյան) 2025 թվականի օգոստոսի 21-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 28-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Այլազ Մաջիթի Ամոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 35-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 334-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար որ *«(…) նա իր ծանոթի՝ Գևորգ Ռոբերտի Եղիազարյանի հետ, առանց նախապես խոստանալու, պարտակել է առանձնապես ծանր հանցագործության՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության հանցափորձ կատարելու մեղադրանքով հետախուզվող ՀՀ քաղաքացի **********-ին, ինչպես նաև մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել, պահել և փոխադրել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ու նախապատրաստել է մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունը շրջանցելով, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցները տեղափոխել ՀՀ պետական սահմանով, որպիսի հանցավոր գործողությունները դրսևորվել են հետևյալում.*

*Իմանալով հանդերձ ՀՀ քաղաքացի **********-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ կատարելու համար ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում քննվող թիվ 26100419 քրեական գործով հետախուզում հայտարարելու հանգամանքի մասին, Այլազ Մաջիթի Ամոյանը, առանց նախապես խոստանալու, պարտավորվել է միջոցներ ձեռնարկել *******-ին իրավապահ մարմիններից թաքցնելու, ապաստան տրամադրելու և պատասխանատվությունից խուսափելու նպատակով ********** Հանրապետության տարածք ապօրինի տեղափոխելու ուղղությամբ, որի համար պայմանավորվածություն է ձեռք բերել իր ծանոթի՝ ՀՀ քաղաքացի Գևորգ Ռոբերտի Եղիազարյանի հետ: Ի կատարումն ստանձնած պարտավորության՝ Այլազ Ամոյանը կապ է հաստատել ***** տարածքում բնակվող, քննությամբ դեռևս չպարզված անձանց հետ, որոնք խոստացել են **********-ին ********** Հանրապետության ******* շրջանի սահմանամերձ գոտուց ապօրինի տեղափոխել ********** ********** ********** տարածք: Համաձայն ձեռքբերված պայմանավորվածության՝ Այլազ Ամոյանը Գևորգ Եղիազարյանի հետ 2019 թվականի մարտի 8-ին իր կողմից շահագործվող «Lexus GX470» մակնիշի, ********** հաշվառման համարանիշի*

*ավտոմեքենայով **********-ին տեղափոխել են ********** տարածք, սակայն, մոլորվելու հետևանքով *********-ին ****** տեղափոխող անձանց հետ չեն հանդիպել և վերադարձել են Հայաստան: Հետախուզվողին թաքցնելու նպատակով Այլազ Ամոյանի ցուցումով Գևորգ Եղիազարյանը **********-ին 2019 թվականի մարտի 9-ից մինչև 12-ն ընկած ժամանակահատվածում թաքցրել է իր՝ ՀՀ ********** մարզի ******** գյուղի ********** փողոցի ********-րդ տանը, իսկ Այլազ Ամոյանը կրկին կապ է հաստատել ********-ում գործող՝ քննությամբ դեռևս չպարզված հանցակիցների հետ: Իմանալով, որ վերջիններս կարող են հայկական կողմ տեղափոխել և իրացնել թմրամիջոցների մեծ խմբաքանակ, Այլազ Ամոյանը նրանց հետ պայմանավորվել է հետախուզվողին փոխանցելու ժամանակ ապօրինի ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով «հերոին» տեսակի թմրամիջոց: Թմրամիջոցների խմբաքանակը ՀՀ պետական սահմանով մաքսանենգությամբ տեղափոխելու, ՀՀ տարածքում փոխադրելու, պահելու և իրացնելու շուրջ Այլազ Ամոյանը նախնական համաձայնության է եկել Գևորգ Եղիազարյանի հետ, որից հետո վերջինիս հետ միասին իր կողմից շահագործվող «Lexus GX470» մակնիշի ******** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով 2019 թվականի մարտի 12-ին **********-ին կրկին տեղափոխել են *********-ի Հանրապետության ********-ի շրջանի ******* քաղաքի սահմանամերձ գոտի՝ **********-ի համար պայմաններ ստեղծելով **********-ի տարածք ապօրինի անցնելու համար: Նախապես պայմանավորված վայրում՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ ********** զորամասի 1-ին սահմանապահ պարեպատան 4-րդ սահմանապահ ուղեկալի պատասխանատվության սահմանամերձ գոտում, հանդիպելով հայ-իրանական սահմանն ապօրինի հատած, ինքնությունները դեռևս չպարզված 2 անձանց, Այլազ Ամոյանը և Գևորգ Եղիազարյանը վերջիններիցս ապօրինի ձեռք են բերել առանձնապես խոշոր չափերով՝ 998.44 գրամ քաշով, 2 փաթեթների մեջ տեղադրված, «հերոին» տեսակի թմրամիջոցը և նախապատրաստվել են այդ խմբաքանակը մաքսանենգությանը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով, տեղափոխել ՀՀ պետական սահմանով, որի համար «հերոին» տեսակի թմրամիջոցով փաթեթները պահել են վերոհիշյալ ավտոմեքենայում և ուղևորվել են դեպի ****** քաղաք, սակայն թմրամիջոցների մաքսանենգությունն ավարտին չեն*

հասցրել իրենց կամքից անկախ հանգամանքներով, քանի որ բռնվել են ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից: (…)»[1]:

6.1. Նույնանման փաստական հանգամանքներով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 35-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 334-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել նաև Գևորգ Ռոբերտի Եղիազարյանին[2]:

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին 2025 թվականի հունիսի 16-ի թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական գործով կայացված որոշմամբ դիրքորոշում է արտահայտել, արձանագրելով հետևյալը. (…)*

Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել Այլազ Մաջիթի Ամոյանին և Գևորգ Ռոբերտի Եղիազարյանին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է: Նման պայմաններում, Դատարանը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում և մեղադրական եզրակացությունը կազմվել է Երևան քաղաքում:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ սույն վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում բխում է նաև արդարադատության շահից՝ հաշվի առնելով, որ մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակից բխում է, որ ինը վկաներից հինգը և փորձագետը բնակվում են Երևան քաղաքում, հանրային

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 93-95:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 105-107:

մեղադրող Վ.Ասատրյանի և պաշտպան Կ.Գրիգորյանի ծանուցման հասցեները ևս գտնվում են Երևան քաղաքում:

Այսպիսով, Դատարանը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործն ըստ ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[3]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերը շարադրված իրավական նորմերի համատեքստում՝ Դատարանը ընդունելի չի համարում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի եզրահանգումն առ այն, որ թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործն ըստ ընդդատության պետք է փոխանցվեր Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:*

Մասնավորապես, վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում հետևյալը.

- Մինչև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործով դատական քննություն նշանակելու մասին որոշում (որոշումներ, թվով 4 դատավորի նախագահությամբ) է կայացված եղել,

- թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել նաև՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո (…),

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահությամբ՝ դատավոր Ա.Բաբախանյանի)՝ 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշումը կայացնելիս ղեկավարվել է՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 17, թերթեր 76-82:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ Դատարանն արձանագրում է, որ՝

- 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի կարգավորումներ որպիսիք վկայակոչված են Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշման մեջ,

- 2025 թվականի մայիսի 30-ի թիվ ԵԱՆԴ/0057/01/15 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վերլուծության ենթարկելով 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 7-րդ մասը, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝ «(…) Այս նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ այն քրեական գործերը, որոնցով մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել, քննվում և լուծվում են ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Անդրադառնալով վերոնշյալ նորմում առկա քննվում և լուծվում են եզրույթներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ եզրույթները վերաբերում են բացառապես գործի ըստ էության քննությանը և լուծմանը: Վերոշարադրյալ մեկնաբանության օգտին է խոսում այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանում բուն դատաքննությունը կարգավորվում է առանձին՝ 10-րդ բաժնի նորմերով, որոնք իրավաչափորեն չեն անդրադառնում հսափանման միջոցներին և դրանց կիրառման կարգին, քանի որ այս հարցի քննարկումը ոչ թե ենթադրում է գործի ըստ էության քննություն ու լուծում, այլ մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովմանն ուղղված դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման կամ արդեն իսկ կիրառված միջոցի իրավաչափության շարունակական ստուգում: (…)»,

- Թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական գործը, որի վերաբերյալ վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հունիսի 16-ի որոշումը վկայակոչված է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշման մեջ, դատարան է ուղարկվել ըստ էության քննության համար՝ 2022 թվականի

հոկտեմբերի 18-ին: Այլ կերպ՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, դրա գործողության ընթացքում,

- քրեական գործերի ընդդատության կանոնները ուղղակիորեն վերաբերում են՝ քրեական գործի ըստ էության քննությանը և լուծմանը:

Վերոգրյալ ամբողջի համատեքստում, Դատարանը գտնում է, որ առերևույթ խնդրահարույց է՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ մտնելն արդեն իսկ դատական քննության նշանակված (ընդ որում՝ մեկից ավելի անգամ) քրեական գործով, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսված կարգավորումների վկայակոչմամբ, 2025 թվականի մայիսի 30-ի թիվ ԵԱՆԴ/0057/01/15 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման առկայության պայմաններում, այդ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշումը (անկախ՝ 2025 թվականի ապրիլի 9-ին կայացված վարույթ ստանձնելու և նախնական դատաքննություններ նշանակելու մասին որոշումից):

Միևնույն ժամանակ Դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է անձի՝ դատական շրջապտույտի մեջ հայտնվելու վտանգ հաշվի առնելով ինչպես թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված լինելու ժամանակագրությունը, այնպես էլ արդեն իսկ կատարված քննության ժամանակահատվածը: Ավելին՝ տվյալ դեպքում չի հիմնավորվում նաև այն հանգամանքը, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ բնակվում է Երևան քաղաքի դատական տարածքում: Բացի այդ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի եզրահանգումները վերոշարադրյալ ամբողջի համատեքստում, Դատարանի գնահատմամբ, խնդրահարույց են նաև՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով մինչ այս արդեն իսկ քննված և լուծված քրեական գործերի տեսանկյունից (…):

Ամփոփելով վերոգրյալ ամբողջը՝ Դատարանը գտնում է, որ առերևույթ խնդրահարույց և ընդունելի չէ՝ թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործը ըստ տարածքային ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի եզրահանգումները, ուստի անհրաժեշտ է թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ քրեական գործի տարածքային ընդդատության հարցի որոշման համար: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի*

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 17, թերթեր 90-93:

կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[5]*:*

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]*:*

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ա.Ամոյանի և Գ.Եղիազարյանի վերաբերյալ թիվ 58215319 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում[8]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել մեղադրյալներին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է, գտել է, որ սույն քրեական վարույթը ՀՀ

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 169-223:

քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով նաև, որ ինը վկաներից հինգը և փորձագետը բնակվում են Երևան քաղաքում, ինչպես նաև որպես հանրային մեղադրողի և պաշտպանի ծանուցման հասցե ևս նշված է Երևան քաղաքը, գտել է, որ սույն վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում բխում է նաև արդարադատության շահից[9]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ մինչև գործող քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելն արդեն իսկ դատական քննության նշանակված քրեական գործով, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսված կարգավորումների վկայակոչմամբ, սուն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 7-ի որոշումն առերևույթ խնդրահարույց է:

Միևնույն ժամանակ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է, որ սույն վարույթով առկա է անձի դատական շրջապտույտի մեջ հայտնվելու վտանգ՝ հաշվի առնելով ինչպես թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական գործն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված լինելու ժամանակագրությունը, այնպես էլ արդեն իսկ կատարված քննության ժամանակահատվածը:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում չի հիմնավորվում նաև այն հանգամանքը, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքում[10]:

---

[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

16. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել Ա.Ամոյանին և Գ.Եղիազարյանին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությունը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

17. Միաժամանակ, հաշվի առնելով վարույթին ներգրավված մեծաթիվ մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում նաև Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությունը, որ սույն վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում բխում է արդարադատության շահից[11]:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությանը, որ սույն վարույթով խնդրահարույց է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի կիրառումը, ապա, հաշվի առնելով, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը սույն քրեական գործով վարույթ է ստանձնել և

[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 215-217:

նախնական դատաքննություններ նշանակել 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներին համապատասխան, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումն իրավաչափ է:

18. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

19. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0085/01/19 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Այլազ Մաջիթի Ամոյանի և Գևորգ Ռոբերտի Եղիազարյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 35-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 334-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԱՐԴ/0085/01/19 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ